ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ք. Կապան «11» հոկտեմբերի 2024 թ

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կարիքների համար ազդանշանային համակարգերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՍՄ-ԳՀԱՊՁԲ-2024/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հուլիսի 15-ին «ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի և « ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ՀՀՍՄ-ԳՀԱՊՁԲ-2024/1-01» ծածկագրով պայմանագիր:

«Լոկատոր» ՓԲԸ-ն, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի «ՀՀՍՄ-ԳՀԱՊՁԲ-2024/1» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատման հանձնաժողովին 2024 թվականի օգոստոսի 2-ի դիմումով ցանկություն է հայտնել, որպես հանրային հսկողություն իրականացնող, աշխատակազմի պատասխանատու ստորաբաժանման հետ մասնակցելու պայմանագրի կատարման գործընթացին :

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5"1 հոդվածը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մմայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 50"1 կետի պահանջներով, բավարարվել է «Լոկատոր» ՓԲԸ-ի՝ «ՀՀՍՄ-ԳՀԱՊՁԲ-2024/1» ծածկագրով գնման ընթակարգի արդյունքում կնքված պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանման հետ համատեղ «ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ-ի կողմից ազդանշանային համակարգերի ձեռքբերման ապրանքների հանձնման-ընդունման գործընթացի հանրային հսկողության իրավունքը:

Հանրային հսկողությունը շրջանակներում, ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի իրավերով, 2024 թվականի հոկեմբերին 4-ին «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից լիազորված անձիք հրավիրվել են ՀՀ ՆԳՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն, մասնակցել ընդունման-հանձնման աշխատանքներին և ներկայացրել եզրակացություն (կցվում է):

ՀՀ Սյունիքի մարզպետի պատասխանատու ստորաբաժանման կողմից մատակարարված ապրանքներն ընդունվել են, իսկ ներկայացված առարկությունները քննարկվել պայմանագիրը կնքած անձի հետ: «ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր պարզաբանումը (կցվում է) ներկայացված դիրքորոշման վերաբերյալ:

Հիմք ընդունելով «ԱՅԱՅ ՍԵՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պարզաբանումը, պատասխանատու ստորաբաժանումը գտնում է, որ «Լոկատոր» ՍՊԸ-ի խորհրդատվական բնույթի առարկությունները պարզաբանված են:

Առդիր՝ 5 թերթ:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Ս. Ավետիսյան